ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 100-Ա

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ Արենի համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Արենի համայնքի ավագանու 20-ը սեպտեմբերի 2022 թվականի թիվ 9 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Արենի համայնքի ավագանու 20-ը սեպտեմբերի 2022 թվականի թիվ 9 նիստի օրակարգը հաստատելու մասին

2. Արենի համայնքի Արենի բնակավայրի կենտրոնական հրապարակը անվանակոչելու մասին

3.Արենի համայնքի ավագանու 22.07.2022թվականի թիվ 85-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

4. Արենի համայնքի ավագանու՝ 09.12.2021թվականի թիվ 139 որոշման հավելվածում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

5. Արենի համայնքի 2022թվականի տարեկան բյուջեի եկամտային մասում ավելացում և ծախսային մասում հոդվածային վերաբաշխումներ կատարելու մասին

6. 2022թվականի սեպտեմբեր ամսին Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված և վիրավորում ստացած զինծառայողների ընտանիքներին միանվագ դրամական աջակցություն հատկացնելուն համաձայնություն տալու մասին,

7. Արենի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդ-վաճառքով օտարելու մասին

8. Արենի համայնքի Գնիշիկ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու և համայնքային սեփականություն հանդիսացող 0.11349հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

9. Արենի համայնքի համար կենտրոնացված աղբավայրի տեղին համաձայնություն տալու մասին,

10. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.68935հա գյուղատնտեսական նշանակության հողամասը մրցույթով վարձակալությամբ հատկացնելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ